ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 76-Ա

ՌԻՄԱ ԽԱՉԻԿԻ ՀՈՎԱՍԱՓՅԱՆԻՆ ՊԱՏՐՈՆ /ՕԳՆԱԿԱՆ/ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածի դրույթով և հիմք ընդունելով Ալավերդու համայնքապետարանի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով»-ի 25.02.2022թ. N 2 արձանագրությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ 2/33-15 հասցեի բնակիչ Ռիմա Խաչիկի Հովասափյանին նշանակել քաղաքացի Քնարիկ Սարոյի Հայրապետյանի /ծնված՝ 27.10.1937թ./ պատրոն /օգնական/:
2. Ռիմա Խաչիկի Հովասափյանին իրավունք վերապահել ստանալու և տնօրինելու Քնարիկ Սարոյի Հայրապետյանին հասանելիք թոշակը, նպաստը և դրամական այլ մուտքերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. փետրվարի 25
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 77-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ, ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁԱՆԱԺՈՂՈՎ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 384-Ն և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի «Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 1532-Ն որոշմները ***որոշում եմ՝***

1. Ռազմական դրության ժամանակ և խաղաղ պայմաններում համայնքի բնակչության և քաղաքացիական պաշտպանությանն (այսուհետ՝ ՔՊ) ուղղված աշխատանքների պլանավորման և կազմակերպման, խոցման օջախներում վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար համայնքապետարանի և կազմակերպությունների հիման վրա ստեղծել՝
   1) ՔՊ շտաբ և ՔՊ ծառայություններ՝ համաձայն հավելված 1-ի.
   2) Տարահանման հանձնաժողով՝ համաձայն հավելված 2-ի.
   3) ՔՊ կազմավորումներ՝ համաձայն հավելված 3-ի:
2. ՔՊ ծառայությունների ղեկավարներին՝ մինչև 02.03.2022թ. մշակել և իմ հաստատմանը ներկայացնել ծառայությունների կանոնադրությունները:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:
4. Որոշումը հայտարարել ըստ առնչության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. փետրվարի 28
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 78-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Լուսյա Բախշիի Երիցյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 1822408 վկայականը, «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲ ընկերության կողմից 24.02.2022թ. տրված թիվ 0-40 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

Լուսյա Բախշիի Երիցյանին սեփականության իրավունքով պատկանող, Ալավերդի համայնքի Սանահին թաղամասում գտնվող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, 2-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 16 բնակելի տուն փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. փետրվարի 28
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 79-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Լեռնիկ Վազգենի Դոլինյանի դիմումը, անձնագրի պատճենը, ժառանգության իրավունքի վկայագիրը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի որոշման քաղվածքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Վերականգնել Լեռնիկ Վազգենի Դոլինյանին (ծնված՝ 07.08.1967թ.) ժառանգության իրավունքով պատկանող՝ներքոհիշյալ գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը.
   1.1 06-002-0282-0001 ծածկագրով, 0.5050 հա մակերեսով 3-րդ կարգի վարելահողի նկատմամբ:
2. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասերի հատակագծերով:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. փետրվարի 28
ք. Ալավերդի